ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

ՅՈՐԴՈՐԱԿ ԾՆՆԴԵԱՆ

Սեաւ եմ, գեղեցիկ,
Դուստր Եւայի Երուսաղէմ.
Ահա նա՛, հարսն իմ ցանկալի՝
Սիրով կապեալ ընդ փեսային։

Նման է եղբաւրորդին իմ այծեմանց
Որթուց եղանց.
Ահա նա՛, ձայն եղբաւրորդւոյն
Խանդաղատեալ սիրով լըցեալ։

Ե՛կ, իմ սիրելի,
Ե՛կ, մերձաւոր Հարսնուհի
Ահա նա՛, խայտայր, «Խնձորով զիս պատեցէք
Տարեալ մուծէք ի տուն գինւոյ»։

Աչք իւր՝ աղաւնոյ,
Թև՝ լար կարմիր՝ մանեակ՝ ոսկւոյ.
Ահա նա՛, լեառն կնդրկի.
Հոտ նարդոսի և զմռսի։

Գեղ էր գովելի
Մանուկ անհաս անժամանակ.
Ահա նա՛, լեառն դիտարան,
Շուշան հովտաց, ծաղիկ դաշտաց։

Դասք մարգարէիցն
Երգեն ի յայն բլրին վերայ.
«Ահա նա՛, հին աւուրցն Աստուած,

Է մանկացեալ, մարմին զգեցեալ»։

Որդիք Սիոնի,
Ելէ՛ք, տեսէ՛ք ի Բեթղահէմ.
Ահա, ելէ՛ք դուք ի յայրին,
Երկիր պագէք թագաւորին։

Ընդ հովիւսն երգեցէք,
Եւ ընդ մոգուցն երկիր պագէք.
Ահա զոսկին թագաւորին,
Զխունկն՝ Աստուծոյ Հաւր միայնոյ։

Որում փա՛ռք եւ զոհութիւն
Եւ հանապազ փառատրութիւն.
Յաւիտեանս յաւիտենից
Քրիստոս աւրհնեալ ի համայնից։